

քեափիսկոպոսի կարդել ի պաշտօն Առաջնորդական Փոխանորդի եւ նախանդամ վիճակային Կոնսիստորիային Հայոց Ղարաբաղու:

Ի 29 Հոյեմբ, 1880 ամի, զնոր—Նախիչևանցի Մովսէս քահանայն Զարիֆեանց, որ զգաստացեալ ի պատժապարտութեանց քանի քանիցս եղելոց ի վերայ նորա վասն ազդի ազդի յանցաւորութեանցն, յանդնեալ է այժմ կատարել խարդախութեամբ գարդելեալն ի քարծրագոյն Հոգեւոր Իշխանութենէ զապօրէն զպաւկն Ուլուխանեանցի որ ի մերձաւոր չնախական աստիճանի ազդակցութեան, առաքել ի վանս Սեւանայ յապաշխարութիւն անորոշ ժամանակաւ առանց փիլօնի եւ քահանայապործութեան. իսկ զպաւկն Մովսէուցի Գէորգայ Մարգարեան Ուլուխանեանց ընդ Հոիփոխեայ Աղամեան Աւանեանց համարել անվաւեր. իսկ զնախանդամն Հոգեւոր կառավարութեամ զԱրխատակէն գարդապեսն, որ ի կատարման վերոգրեալ ապօրէն պանակին նոյնչափ յանցաւոր է, որչափ Զարիֆեանցն, որպէս եւ քաջ յայտնի է Վեհափառ Կաթուղիկոսին եւ անդամոց Սինօղիս, տուաքել ի վանս Խոր—Վիրապի յապաշխարութիւն անորոշ ժամանակաւ. առնելով ի նմանէ զիեղորմ:

Ի 40 Գեկա. 1880 ամի Ըստ մակագրութեան Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց ի վերայ մեղայազրոյ Ցովաննեէն քահանայի Արգսեան Տփխիսեցւոյ նախ առնուլ զուխտազիր ի յիշեալ քահանայէ առ. ի զուշանալ յապապային եւ մի մեղանչել երբէք ընդդէմ կանոնաց Եկեղեցւոյ մերոյ, եւ ապա տալով նմա զփիլօնն քահանայութեան, Թոյլատրել առ այժմ լսել միայն զիսոսառվանութիւնս ծխոցն, զի մերծ են աւուրք Ս. Շննդիան Քրիստոսի, պատուիրելով միանգամայն կատարել ջիրմեռանդութեամբ զյանձնառեալ ապաշխարութիւնն, որով ոչ առ ազան մաքրեսցի բարովին ի մեղացն առաջի Աստուծոյ եւ ազատեսցի ի պատժոցն:

### ՊԵՇՏՈՆԵԿԵՆ ԽԾԱՅԱՅՅՈՒՄՆԵ.

ԱՅԼ և այլ տեղերից լուր է հասել Ս. Սինօղին թէ՝ Վանեցի Ղազար վարդապետ անունով մի անմօրուս մարդ ինքն իրան Արքեպիսկոպոս ձեւացրած՝ թափառում է զանազան հայարնակ զիւղեր, քաղաքներ և վանքեր՝ և աւելի Երևանու և Տփխեաց վիճակներում, և խարդախունաբերեայ միջոցներով յարգանք ու նուելներ է ձեռք բերում ժողովրդից, մանաւանդ թէ՝ իւր անկարգ և եկեղեցականութեանը անվայելուց ընթացքով շատ շննծու թղթերով, սուստ վկայականներով և կոնդակներով գոյմակղեցնում է պարզամիտ ժողովրդոց, Վասնորոյ Ս. Սինօղի կողմէց Արարատի միջոցաւ պաշտօնապէս պատուիրւում է ամենայն Յաջորդաց, Հոգեւոր Գործակալաց և Երէցիոխանաց խստիւ արգելել նորա ժողովրդի շեան մէջ ըրջագայութիւնը և բռնել տալով խրկել այսր ի Ս. Էջմիածին. նոյնպէս արգելել և այն ամեն խարդախ և խարերայ թափառական եկեղեցականներին, որոնք չեն ունենալ Հոգեւոր Ռայրազոյն Եշխանութիւնից օրինաւոր պաշտօնական հրաման կամ զրութիւն։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷջՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱԳԱՏ.